

**Ռուզաննա ԱՌԱՔԵԼՅԱՆ**  
Երևանի պետական համալսարան

## **ԼԵՂՎԱԿԱՆ ԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈԳԵԼԵՂՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԵՐՊԵՐԸ**

Սույն հոդվածը նվիրված է լեզվական գիտակցության հոգելեզվաբանական հայեցակետերի քննությանը: Ինչպես գիտակցության այլ տիպերը, այդպես էլ լեզվական իր գոյությունը պահպանում է անհատների գիտակցության մեջ որպես լեզվակրի արտահայտչամիջոց: Լեզվական գիտակցության ամենակարևոր գործառույթն իրականության ճանաչման և արտացոլման գործառույթն է: Գիտակցության մեջ հասկացությունների և կարգերի գործածության և գնահատման ձևերը, բառիմաստի ազգամշակութային առանձնահատկությունները իրենց վառ արտացոլումն են ստանում զուգորդային կապերում: Այս է պարզապես, որ լեզվագիտակցության հարցերին անդրադառնալիս անհրաժեշտ է ուսումնասիրել գիտակցության ներքին կառուցվածքը:

**Բանալի բառեր՝** լեզվական գիտակցություն, հաղորդակցություն, խոսքային գործունեություն, կարգային կառույցներ, մտածողություն, զուգորդային կապեր, նշանակություն

Մարդկային մշակույթը, հասարակական գործունեությունը և մտածողությունը, ինչպես հայտնի է, չեն կարող գոյություն ունենալ լեզվից անկախ: Սակայն հնարավոր է արդյոք մտածողության ու խոսքի տարանջատումը: Ամերիկյան բիոէվոլյուցիոնիստ առաջնորդներն այս հարցի հետ կապված վստահաբար նշում են, որ մտածողությունը ոչ այլ ինչ է, քան թաքնված խոսք: Այլ դիրքորոշում է դրսևորել հարուստ պատմություն ունեցող հոգեբանությունը, որում այս հարցի վերաբերյալ առաջինն իր վերաբերմունքն է արտահայտել ռուսական հոգեբանախոսության հիմնադիր Ի. Սեչենովը: Նա նշում է, որ լեզուն և մտածողությունը սերտորեն կապված են մանկության տարիներին, սակայն զարգացման արդյունքում, մեծահասակի մտածողությունն ինչ-որ չափով ազատվում է բացահայտ խոսքային հակազդումներից /Сеченов, 2001, 85-86/: Լ. Վիգոտսկու՝ մտածողության և խոսքի փոխհարաբերությունների բացահայտմանը վերաբերող ամենախոշոր աշխատության մեջ այն միտքն է արտահայտվում, որ և՛ ֆիլոգենետիկ, և՛ օնթոգենետիկ գոյություն ունեն ոչ բառային մտածողության բաղադրիչներ, ինչպես նաև ոչ ինտելեկտուալ խոսք (հու-

զական բացականչություններ): Հեղինակն այստեղ փորձում է հետևել այդ բաղադրիչների փոխկապակցված զարգացմանը մինչ այն պահը, երբ խոսքն սկսում է ապահովել մտածողությունը, իսկ մտածողությունն արտացոլվում է խոսքում /Выготский, 1981-1988/:

«Լեզվական գիտակցություն» հասկացությունը լեզվաբանական ու հոգելեզվաբանական ուսումնասիրություններում գործածվում է լեզվակիրների կողմից «լեզվական ճշգրտության» կամ լեզվական սխալների գիտակցման բնութագրման համար: Ուշադրության է արժանի խորհրդային շրջանի հոգեբան Պ. Գալպերինի մոտեցումը, որը վերլուծում է լեզվական գիտակցության հայեցակարգերից մեկը՝ հոգելեզվաբանական տեսանկյունը և լեզվական գիտակցության ու ճանաչողության կապը /Гальперин, 1976/:

Որքան էլ լեզվական գիտակցության սահմանումները տարբերվեն, նրա գործառույթները հիմնականում հինգն են.

1. արտացոլող (լեզվական գիտակցության մեջ լեզվական միջոցներով արտացոլվում են մարդու գիտելիքներն ու իրականության մասին պատկերացումները),

2. գնահատողական (լեզվական միջոցները գնահատվում են հանրաբանական, ռճաբանական, գեղագիտական, ժամանակային ու հավանականության հայեցակերպերով),

3. ղեկավարող-վերահսկող (որի գործակցման հիման վրա «վերակառուցվում են» լեզվական նորմերը և վերհանվում են լեզվախոսքային գործունեության ընթացքում առաջացող բարդությունները),

4. մեկնողական (մեկնաբանում է յուրաքանչյուր տիպի նշանը լեզվականի միջոցով),

5. ընտրողական-կողմնորոշիչ (որի հիման վրա հիմնականում կատարվում է լեզվական միջոցների ընտրությունը՝ հաղորդակցման իրադրությանը և պայմաններին համապատասխան):

Լեզվի առաջնային գործառույթը, ինչպես հայտնի է, հաղորդակցականն է, որի նպատակն իր սեփական և այլ մարդկանց գործունեության ղեկավարումն է: Լեզվի այնպիսի գործառույթները, ինչպիսիք են վերաբերականը, հուզականը, ճանաչողականը, առնչանակայինը, արտահայտչականը և այլն, առավել հստակ են արտահայտում լեզվական գիտակցության վերը նշված գործառույթները: Այսպես, լեզվական գիտակցության արտացոլող գործառույթը նպաստում է լեզվի բոլոր գործառույթների բացահայտմանը: Լեզվական գիտակցության գնահատողական գործունեությունը բացահայտում է լեզվի հուզական գործառույթը, հետևաբար, այն անմիջականորեն մասնակցում է տեղեկության ճիշտ փոխանցմանը: Լեզվի ճանաչողական ու հաղորդակցական գործառույթների կատարումը կապված է լեզվական գիտակցության ղեկավարող-վե-

րահսկող գործառնությունների հետ: Այսինքն, լեզվական գիտակցությունն ապահովում է լեզվի գործառնությունից յուրաքանչյուրի իրականացումը:

Ինչպես նշում է Պ. Գալպերինը, ի տարբերություն ճանաչողականի, լեզվական գիտակցությունը ձևավորվել է որպես միասնական գործունեության կազմակերպման միջոց: Հետևաբար, լեզվական գիտակցության համար առաջնային է փոխանցվող հաղորդման ազդեցիկությունը: Սա է պատճառը նաև, որ լեզվական գիտակցությունը կարևոր է համարում հաղորդման փոխանցման այնպիսի միջոցների ընտրությունը, որոնք հասարակական համապատասխան իրադրության մեջ խոսքին տալիս են այս կամ այն բնութագիրը և ապահովում ընկալման, արդյունքում նաև ճիշտ գործելու հավանականությունը: Լեզվական և ճանաչողական գիտակցությունները հատվում են, երբ վերաբերության օբյեկտ է դառնում լեզուն: Դրանցից յուրաքանչյուրը, ունենալով իր խնդիրները, սերտորեն համագործակցում է մյուսի հետ: Այսպես, օրինակ, «արտալեզվական» գիտելիքը մասնակցում է լեզվական հաղորդակցմանը՝ դրա օրինաչափությունների մասին գիտելիքի ձևով: Չէ՞ որ մենք կարողանում ենք ոչ միայն ճիշտ կազմել նախադասություններ արտահայտվելու համար, այլև ճիշտ ներկայացնել փաստարկներ, ժխտել, գովաբանել և այլն:

Հաղորդակցման հարցերը քննելիս հարկ է հիմնվել Լ.Վիգոտսկու և Ա.Ն.Լեոնտևի՝ գործունեության, Ա.Ա. Լեոնտևի՝ խոսքային գործունեության տեսությունների վրա: Լեզվախոսքային գործունեության ընթացքում օգտագործվող լեզվական նշաններն օրգանիզմի վրա ազդեցություն գործող դրդիչներ են համարվում: Դրանք ոչ թե դրդիչ-օբյեկտներ, այլ դրդիչ-միջոցներ են, որոնց օգնությամբ մենք ղեկավարում ենք գործողությունները: Այստեղ հարկ է ասել, որ նշանն իր սկզբնաղբյուրով վերաբերում է «բան» կոչված նյութական առարկային կամ երևույթին: Վերը նշված «նշանային» գործողությունները կարող են ոչ թե որպես կոնկրետ առարկա, այլ իրողություն դիտարկվել: Վերջինս իրականում նույնպես պահանջում է իր հոգեկան, զգայական համարժեքը: Երբ նշանային գործողությունն ուղղված է ինքնահաղորդակցմանը, այսինքն՝ ինքնակառավարմանը, ապա «նշան» հասկացության մեջ, ըստ Ա.Ա.Լեոնտևի, կարելի է տարբերակել «վիրտուալ» և «ռեալ» հայեցակերպերը: Վիրտուալ նշան է համարվում նշանում առարկայացված գործունեությունը: «Վիրտուալ» նշանը միշտ վերացական է, քանի որ այն հանդես է գալիս որպես գործունեության միջնորդ /Леонтьев, 1965: 81/: «Ռեալ», գործող նշանը կոնկրետ նշանային գործողության բաղադրիչն է, որը նյութական է կամ ներուսակ նյութական:

Հետևելով Լ. Վիգոտսկուն՝ «գործունեություն» հասկացությունը կիրառելիս նկատի ենք առնում «գործընթացների մի այնպիսի ամբողջություն, որն ուղղված է որոշակի արդյունքի հասնելուն»: Այդ արդյունքն իր

հերթին հանդես է գալիս որպես գործունեության դրդիչ՝ ունենալով ինչպես գործնական, այնպես էլ տեսական բնույթ: Լեզվախոսաբանին գործունեության ընթացքում այլ մշակույթները ոչ միայն ճանաչվում, այլև վերաձևակերպվում են սեփական մշակույթի լեզվական տերմիններով: Ճանաչվում և յուրացվում են սեփական մշակույթի անձանոթ փաստերն ու երևույթները: Ա. Լեոնտևի՝ գործունեության տեսության մեջ ընդունված է նշանակությունը գիտակցության միավոր համարել: Առարկան արտացոլվում է մարդու գիտակցության մեջ նրա նշանակության հետևանքով և կայանում է գործունեության համատեքստում ունեցած իր հատկանիշներում /Леонтьев, 1975: 13/:

Հիրավի, նշանակության հիմնահարցին անդրադառնում են բոլոր հումանիտար գիտակարգերը: Այն տարբեր տեսանկյուններից է դիտարկվում լեզվաբանության, հոգեբանության և հոգելեզվաբանության կողմից: Նշված գիտակարգերից յուրաքանչյուրում նշանակությանը տրվել են միմյանցից տարբերվող մեկնաբանումներ, ինչը բոլորովին էլ պատահական չէ, քանի որ նշանակությունը կապված է լեզվի կիրառման հետ, և արդյունքում դժվար է ըմբռնել նրա իրական սահմանները: Լեզվական նշանակությունը մեզ հնարավորություն է ընձեռում գնահատել արտահայտած նախադասությունների իսկությունը, վերաձևակերպել դրանք, մեկնաբանել արտասովոր իրադրությունները, հասկանալ երկիմաստությունը և օգտագործել բառերը դրանց փոխաբերական իմաստներով:

Հոգեբանությունը նշանակություն է համարում անձի կողմից պատմահասարակական փորձի ընդհանրացումը, որը ձեռք է բերվում ընդհանուր գործունեության և հաղորդակցման ընթացքում: Հոգեբանության տեսանկյունից նշանակությունն իր գոյությունը պահպանում է հասկացությունների միջոցով, որոնք առարկայացվում են հասարակական դերերի, նորմերի, արժեքների մեջ:

Լեզվաբանական տարբեր ուղղությունների կողմից առաջարկված նշանակության սահմանումները կարելի է ստորաբաժանել երկու տիպի: Դրանց մի մասը նշանակությունը հոգեկան արտացոլում է համարում, մյուսն այն վերագրում է լեզվական նշանի, առարկայի, հասկացության, իրադրության միջև գոյացող հարաբերություններին: Կառուցվածքային լեզվաբանության մեջ լայն տարածում է ստացել նշանակության՝ որպես նշանների փոխհարաբերության մեկնաբանումը: Նշանակության այս տեսակը կոչվում է կառուցվածքային կամ դիֆերենցիալ: Կառուցվածքաբանության տարբեր ուղղություններից նկարագրական լեզվաբանության մեջ զարգանում է նշանակության ուրույն տեսությունը: Լեզվական նշանակության ուսումնասիրության հարցում հոգելեզվաբանական մոտեցում կիրառելիս կարելի է առանձնացնել երկու հիմնական ուղղվածություն.

կառուցվածքային մոտեցումը, որը որոշում է նշանակության չափանիշներն ու հատկությունները, և նշանակության՝ որպես գործընթացի ուսումնասիրության մոտեցումը, որի կիրառման ընթացքում ուշադրության կենտրոնում նշանակության հասկացման ու յուրացման խնդիրներն են:

Նշանակությունը, ինչպես նշվեց, ունի երկակի բնույթ. այն հասարակական է իր էությանմբ, սակայն կարող է գոյություն ունենալ միայն անհատական գիտակցության մեջ: Գիտակցական ոլորտում նշանակության գործառույթի ուսումնասիրությունը ենթադրում է այնպիսի իրական հոգեկան գործընթացների ուսումնասիրություն, ինչպիսիք են անձնային նշանակություններն ու իմաստները: Հոգեվեգվաբանների համար մեծ հետաքրքրություն են ներկայացնում մասնավորապես հասարակայնորեն մշակված, բայց անհատների կողմից յուրացված նշանակությունները: Ա. Լեոնտևը գիտակցության մեջ դրանց գոյության ձև է համարում գործունեության ընթացքում բառերի կիրառման, դրանց հարաբերակցման համակարգը /տե՛ս Куликов, 2001: 177/: Ի տարբերություն Ֆ. դե Սոսյուրի՝ Լ. Վասյազբերը նշյալի և նշանակյալի փոխհարաբերությունը համարում է ոչ թե զուգորդային, հոգեկան կապ, այլ գործառույթ /Кодухов, 1976: 58/: Ըստ Գ. Ֆրեգեի՝ անվան իմաստն այն տեղեկությունն է, որն արտահայտված է անվան մեջ և միանշանակ կերպով բնութագրում է այս կամ այն առարկան: Մտապատկերը, ըստ Գ. Ֆրեգեի, սուբյեկտիվ, փոփոխական երևույթ է, որը հիմնված է հույզերի վրա: Անգամ միևնույն մարդու մոտ տվյալ իմաստը տարբեր ժամանակներում տարբեր մտապատկերներ է առաջացնում: Եթե իմաստը սուբյեկտիվ է, ապա նշանակությունը օբյեկտիվ, այսինքն՝ կարող է շատերի ձեռքբերումը լինել: Այլ կերպ ասած, հոգեբանականը հավասարվում է անհատականին և սուբյեկտիվին, իսկ տրամաբանականը՝ ընդհանուրին և օբյեկտիվին:

Համալրվելով հուզական, զուգորդական բաղադրիչներով՝ նշանակությունը, բացի հասկացությունից ու մտապատկերից, պարունակում է նաև զգայորեն ընկալվող, այսինքն, հուզական տարրեր: Նշանակությունը մի այնպիսի հոգեկան գործընթաց է, որում արտացոլվում են մարդու մտածողությունը, կամքը և զգացմունքները: Նշանակությունը որպես հոգեկան երևույթ դիտարկվում է նաև Գ. Սթեռնի, Գ. Կրոնասերի և Ա. Սմիռնիցկու աշխատություններում: Նշանակության անգամ ամենատարբեր մեկնաբանությունների դեպքում լեզվական նյութի և ձևի ընդհանրությունը պահպանվում է: Տարբերակվում են դրա ուսումնասիրության ներլեզվական (ձևից բովանդակություն) և արտալեզվական ուղղությունները: Լեզվական նշանակությունը որպես սուբյեկտի բազմակողմանի գործունեության հիմք համարելն ինքնաբերաբար բացառում է մտածական գործընթացի մեխանիկական լինելու հնարավորությունը: Եթե լեզվաբանությունն ուսումնասիրում է նշանակության յուրահատկություն-

ները, տեսակները, կառուցվածքը, ապա ժամանակակից հոգելեզվաբանության մեջ նշանակությունը մեկնաբանվում է որպես լեզվական գիտակցության միավոր:

Ա. Լեոնտևի հայեցակարգի համաձայն՝ նշանակությունը ոչ միշտ է ամրակայվում բառի կամ բառակապակցության մեջ, սակայն «լեզվական նշանակությունը դառնում է հասարակական գիտակցության հիմնական բովանդակությունը» /Лео́нтьев, 1965: 188/: Ի տարբերություն նշանակության՝ իմաստն ստեղծվում է մարդու օբյեկտիվ վերաբերմունքով այն ամենի նկատմամբ, ինչը նրան գործողության է դրդում: Այլ կերպ ասած, իմաստը գիտակցության մեջ իրականության արտացոլումն է որոշակի կոնկրետ հատվածներով: Եթե Լ. Վիգոտսկին նշանակությունը համարում է առավելապես մտածողության և լեզվի միավոր, ապա Ա. Լեոնտևի համար այն նախ և առաջ գիտակցության միավոր է, որի դերը կարևորվում է իրականության ընդհանրացված արտահայտմամբ: Ինչպես իրավամբ նշում է Ե. Տարասովը, Ա. Լեոնտևի կողմից առաջարկված իմաստի հայեցակարգը, ի տարբերություն այլ հոգեբանական հայեցակարգերի, կարևորվում է նրանով, որ այստեղ իմաստը դիտարկվում է ոչ թե որպես գիտակցությամբ ձևավորված երևույթ, այլ որպես գիտակցության միջոցով առարկայի ու մարդու գործունեության միջև ձևավորվող փոխհարաբերության արտացոլում: Այս հայեցակարգը պարզ է դարձնում այսպես կոչված «իրադրական համատեքստային նշանակություն» ունեցող բաների ծագումը /Тарасов, 1985: 84/:

Նշանակության դինամիկ լինելու գաղափարն արտահայտվել է Լ. Վիգոտսկու կողմից, որը նշանակությունը «մտքից բառ տանող ճանապարհ» է համարում: Սակայն այս գործընթացը բավականին բարդ է և հաճախ պարզ չի լինում, թե ինչ կա բառի և մտքի միջև: Եթե նախկինում խոսքը համարվում էր «մտքի զգեստավորում» (վյուրցբուրգյան դպրոց) կամ հմտություն (բիհեյվիորիզմ), ապա Լ. Վիգոտսկու մոտեցման համաձայն՝ միտքը ձևավորվում է խոսքում, կամ, ինչպես հենց հեղինակն է նշում, այն «կայանում է մտքում»: Հոգելեզվաբանության մեջ այս գաղափարն իր ձևակերպումն ու զարգացումն ստանում է Ա. Լեոնտևի մոտ: Վերջինս, նշանակությունը գիտակցության միավորների շարքը դասելով, այն դինամիկ գործընթացների ստորակարգություն է համարում:

Ինչպես վերը նշվեց, նշանակության հոգելեզվաբանական մեկնաբանումը հենվում է գործունեության տեսության վրա, համաձայն որի՝ առարկան արտացոլվում է մարդու գիտակցության մեջ դրա նշանակության միջոցով, քանի որ նշանակությունն առարկայական աշխարհի օբյեկտիվ կապերի որակի չափն է, աշխարհի և մարդու հարաբերակցությունը: Նշանակության դինամիկ կարող է ուսումնասիրվել կարգային կառույցների օնթոգենետիկ զարգացման ընթացքում: Իմաստային կա-

ռույցների քննությունը հոգելեզվաբանական մոտեցմամբ կօգնի բացահայտել խոսող անհատների լեզվական գիտակցության պատկերի զարգացման առանձնահատկությունները: Լեզվախոսքային գործունեության գործառույթների և նշանակության կառուցվածքի հարցերը դիտարկելիս անհրաժեշտ է առավել մանրամասն անդրադառնալ «նշանակություն-իմաստ» փոխհարաբերություններին:

Բառիմաստի չափման առաջին փորձերն արվել են Չ. Օսգուդի կողմից (խոսքը իմաստային տարբերակիչի սկզբունքի մասին է): Դրանց հաջորդել են լեզվական նշանի կադապարման փորձերը՝ պատկերի և հասկացական ձևերի հարաբերությունների հաստատման միջոցով, որոնք կախված են ազգամշակութային, տարիքային և այլ գործոններից: Այսօր իմաստաբանությունը վերածվել է տարբեր գիտությունների կարևոր հայեցակետերից մեկի, որն իր ազդեցությունն ունի լեզվաբանության մեջ՝ նշանակության տեսության մշակման գործում: Ընդհանուր, տրամաբանական և լեզվաբանական իմաստաբանությունները կապված են միմյանց հետ գիտակցության և նյութական ոլորտների վերաբերությամբ: Ընդհանուր իմաստաբանությունը ճանաչողական տեսության բաժիններից է, որն ուսումնասիրում է լեզվի և գիտակցության հարաբերությունները: Իմաստաբանության հայեցակարգերը նաև փիլիսոփայական բնույթ ունեն, որի մասին տեղեկանում ենք լեզվի Վ. Հումբոլդտի ուսմունքից, Հ. Շտայնթալի ազգային հոգեբանությունից, Սեպիր-Ուորֆի հարաբերականության տեսությունից և այլ աշխատություններից: Բառի իմաստային դաշտին վերաբերող տեսություններում նշանակությունը հաճախ մեկնաբանվում է որպես հարացույցի կամ շարակարգի բաղադրիչների հարաբերություն: Հարացույցների ուսումնասիրությունն առավել հստակ տարվել է Տրիր-Վայսգերբերի իմաստային դաշտերի տեսության մեջ: Դրա համաձայն՝ առանձին բառերի նշանակությունը կախված է դրա «հասկացական հարևանների» հետ, այլ կերպ ասած, իմաստային հարացույցի մյուս անդամներից: Այս մոտեցումն ավելի հստակ իր ձևակերպումն է ստանում Լ. Վայսգերբերի աշխատության մեջ, որում ասվում է. «Առանձին անդամի նշանակությունը կապվում է ամբողջի կառուցվածքային օրինաչափությունների հետ»: Ոչ թե ամբողջն է կազմվում առանձին ինքնուրույն մասերից, այլ նշանակությունն է առանձնանում դրանից և պայմանավորվելով դրանով ու դառնալով դրա անդամը՝ հասկացվում»: Այս փոխկապակցվածությունը Լ. Վայսգերբերը «դաշտի օրենք» է կոչում: Շարակարգայնությունն իր արտացոլումն է ստանում նախադասության մեջ բառերի «ինքնուրույնության անհնարին լինելու թեզում»: Վերջինի համաձայն՝ բառի նշանակությունը պայմանավորված է նախադասության իմաստով /տե՛ս Васильев, 1990: 65/:

Հաճախ նշանակության էության և նրա գործառույթների քննումը սահմանափակվում է բառի առարկայական վերաբերությամբ և առարկայական բովանդակությամբ: Այսպիսի մոտեցումը ենթադրում է, որ օբյեկտիվ է միայն այն, ինչ հարաբերության մեջ է մտնում առարկայական աշխարհի հետ: Այնուամենայնիվ, նշանակության էությունը սերտորեն կապված է մարդու գիտակցության և ընդհանուր գործունեության հետ: Գիտնականներից շատերը (Վ. Չվեգինցև, Ա. Ուֆիմցևա, Ի. Սթեռնին) փորձում են համակցել վերը նշված տեսությունները: Նրանք նշանակության հասկացության մեջ են մտցնում բառի ու առարկայի, բառի ու հասկացության, բառի ու լեզվական համակարգի հարաբերությունները:

Բառի նշանակությունը յուրաքանչյուր անհատի կողմից հասարակական փորձի յուրացումն է: Այն, ինչ հասկացվում է «բառ» ասելիս, ընդհանուր է տվյալ լեզվով խոսող և հոգեբնախոսական որոշակի զարգացման հասած բոլոր մարդկանց համար: Այսպիսով, ձեռք է բերվում մի այնպիսի գործիք (բառը), որով «գծագրվում է» մեր գիտելիքը շրջապատող իրականության մասին: Համակարգված գիտելիքի մեջ են մտնում կենցաղայինը և գիտականը: Անձնային իմաստները հաճախ չեն համընկնում համակարգվածին, դրանք կա՛մ դրանցից ավել, կա՛մ պակաս են: Այս կապակցությամբ պետք է հաշվի առնել, որ համակարգված նշանակությունը հանդես է գալիս որպես նշանակության նկարագրման միջոց, որպես վերացականություն՝ անջատված լինելով լեզվական գիտելիքներից: Սակայն հարկ է ավելացնել, որ բառարանը ներկայացնում է համակարգված նշանակության միայն մի մասը, քանի որ լեզվակիրների իրական լեզվական կարողությունը սովորաբար ավելի զարգացած է: Այս նկատառմամբ հարկավոր է վեր հանել և նկարագրել իրական նշանակությունները՝ դրանք առավելագույնս մոտեցնելով լեզվակրի հնարավոր կարողություններին: Լեզվակրի հոգեկանի մեջ առկա նշանակությունների մեջ իմաստաբանի ճիշտ կողմնորոշման անհրաժեշտության և կարևորության մասին խոսել է Յ. Կարաուպլը՝ նշելով, որ «իմաստային բաղադրիչների ընտրությունը և մեկնաբանումը չպետք է անցնի միջին լեզվակրի ընկալման մակարդակը»:

Բառի նշանակությունն արտացոլում է բառի ճանաչման այնպիսի աստիճանը, որը հատուկ է հասարակական գիտակցությանը տվյալ փուլում: Լեզվաբանն ուսումնասիրում և նկարագրում է բառի նշանակությունը որպես առարկայի մասին հասարակայնորեն ձեռք բերված գիտելիք: Բառն իր իմաստի մեջ պարունակում է հասարակության զարգացման տվյալ փուլում ձեռք բերված գիտելիքը: Ըստ հոգեբանների, աշխարհի մասին գիտելիքը չի տարբերվում բառային նշանակությունից: Բառը ոչ միայն նշանակում է առարկան, այլև վերլուծում այն՝ փոխանցելով սերունդների պատմական զարգացման ընթացքում ձևավորված փորձը:



Աշխարհի մասին մարդու լեզվական գիտելիքը հակադրվում է ոչ լեզվականին, այսինքն՝ այն գիտելիքին, որն առկա է գիտակցության մեջ զգայական-պատկերավոր ձևով:

Անհատական գիտակցության մեջ յուրացվող նշանակություններն ամբողջական են դարձնում իրականության զգայական տպավորությունները, որոնցում ամբողջանում են գործունեությունը և մոտիվների ու պահանջմունքների բավարարման կամ չբավարարման զգայական վերապրումները: «Իմաստ» և «նշանակություն» հասկացությունները գիտակցության մեջ բառի գրանցման աստիճանով են պայմանավորված: Նշանակության և իմաստի հակադրումը, որը լեզվաբանության մեջ իր պատմությունն ունի, հոգելեզվաբանության մեջ նույնպես ոչ շատ միանշանակ է բացատրվում: Այնուամենայնիվ, այստեղ հնարավոր է դառնում ուրվագծել այն ընդհանուր ուղղվածությունը, որը կապված է խոսողի անձնային իմաստների սահմանման և, որն ավելի կարևոր է, խոսքի ձևավորման ընթացքում դրանց որոշիչ դերի հաշվառման հետ: Այս առումով, համաձայնելով Ա. Լեոնտևի հետ, պետք է նշել, որ բառիմաստը նշանակության համանմանակն է, քանի որ երկուսն էլ արտացոլում են իմաստային ոլորտ, և նրանց կենտրոնում նրանց առաջացնող ու կրող խոսքային անհատն է:

Մարդու և բնության փոխհարաբերություններում նշանակությունը հանդես է գալիս որպես գիտակցության հոգեբանական միավոր: Այսպիսով, գոյություն ունեն նշանակության երկու հիմնական մակարդակներ. զգայական ընկալումների և կարգային կառույցների նշանակությունները, որոնք հայտնի են «լեզվական նշանակություն» անվամբ: Այս համակարգի բովանդակությունը համապատասխանում է ազգամշակութային առանձնահատկություններին: Վերջիններս արտահայտում են ստանում ազատ բառագույնություններում՝ լեզվակրի գիտակցության բաղադրիչը լինելով: Լեզվակիրների գիտակցությունը նրանց կենսագործունեության և աշխարհընկալման արտացոլումն է: Լեզվական նշանների գործածումը մեծ ազդեցություն է թողնում մարդու լեզվունակության հոգեբանախոսական զարգացման վրա: Նշանակություն-իմաստ զույգում նշանակությունը հանդես է գալիս որպես նշանի կառուցվածքային գործառույթ, իսկ իմաստը՝ իրադրությամբ պայմանավորված ընկալում: Այս կամ այն հանրամշակութային լեզվակրի տեսակյունից միևնույն բաղադրիչը կարող է դիտարկվել և՛ որպես նշանակության մաս, և՛ իմաստային առանձնահատկություն:

Գիտակցության մեջ հասկացությունների և կարգերի գործածության ու գնահատման ձևերը, բառիմաստի ազգամշակութային առանձնահատկությունները, ինչպես վերը նշվեց, երևան են գալիս զուգորդային կապերում: Մարդու հոգեկանում զուգորդվում են զգայությունները, մտա-

պատկերները, իմաստներն ու հասկացությունները: Գիտակցության գործունեության ոլորտում զուգորդումներն իրենց դերով նշանակությունից հետո երկրորդ տեղն են զբաղեցնում: Չուգորդումները գործառական այն կապերն են, որոնք ապահովում են հոգեկան ձևերի տեղաշարժերը, կուտակումները, բաշխումներն ու կերպարափոխումները: Անմիջական զգայություններն իրենց արտացոլումն են ստանում նշանային համակարգի միջոցով, քանի որ զուգորդումները մտքի ընթացքն ապահովող տարրական գործողություններն են: Չուգորդային կապերը կազմակերպում, կարգավորում են գիտակցության բազմաբնույթ գործունեությունը: Գիտակցության ոլորտ ընկած ամեն մի նոր բառ (նշանակություն) իր տեղն է գտնում գիտակցության մեջ ամրակայված զուգորդումների ցանցում: Նշանակության լրացված, ամբողջականացված լինելը կախված է զուգորդումների թվից: Չուգորդումները կայանում են զուգորդվող կողմերի մեկ կամ մի խումբ հատկանիշների նմանության կամ նույնության հիմքով: Չուգորդման մտածական օրինաչափությունների առաջին գիտական դասակարգումները կատարվել են 18-րդ դարում Հարտլիի և Պրիստլիի կողմից առաջ քաշված ասոցիանիզմի հայեցակարգում /Pristley, 1775: 166/: Վերջինիս գաղափարները հետագայում իրենց զարգացումն ապրեցին իմացաբանական կիրառական և տեսական բնույթի խնդիրների լուծման ճանապարհին: Մտածական տարրերի ժամանակակից ճանաչողական գիտությունների ուսումնասիրությունը վկայում է, որ տարբերվում են իրադրական և կարգային պատճառականություն ունեցող զուգորդումներ կամ կապակցումներ: Իրադրական զուգորդումները, ի տարբերություն կարգայինների, երկու փուլով են իրականանում. ընդհանուր հատկանիշի բացահայտում ու իրադրության առանձնահատկության վերացարկում:

Չուգորդումների մեխանիզմների կայացման շնորհիվ «հին գիտելիքը» ճանապարհ է բացում նոր հասկացության ստեղծման համար: Հասկացությունները զուգորդելիս կարող ենք հենվել դրանց բառահնչյունական կազմության, օրգանական ծագման կամ որևէ անհատական որակի վրա (գույն, միջավայր և այլն): Որակական այս առանձնահատկությունները կարող են վերածվել նշանակության: Կախված նրանից, թե ինչ աստիճանի է հասել հասկացության յուրացումը տվյալ լեզվական գիտակցության կողմից, կամ ինչպիսին է հասկացության կարգային կառուցվածքը, ինչ իրադրական միջավայրում է այն յուրացվել, դրա կազմած զուգորդումները կարող են լինել լեզվական և արտալեզվական: Արտալեզվական զուգորդումներն արտահայտվում են ժողովրդական բանահյուսության, արվեստի և մշակույթի մեջ՝ ներկայացնելով ազգի և անհատի հոգեբանությունը: Լեզվական զուգորդումներն առանձնանում են ձևաբանական, հնչյունային, գործառական կամ հաս-

կացական լինելով: Հետևաբար, բառի յուրացումը սերտորեն կապված է լեզվական գիտակցությունը ձևավորող օնթոգենետիկ և ֆիլոգենետիկ գործոնների ամբողջության հետ: Զուգորդական կապերը որպես լեզվական նշանի հոգեբանական ներուղղման և իմաստավորման մեխանիզմ դիտելը տրամաբանորեն հանգեցնում է իմաստի էության բացահայտմանը: Յուրաքանչյուր նոր նշանակություն, ընկնելով գիտակցության ոլորտ, իր տեղն է գտնում զուգորդային «ցանցի» մեջ: Որքան մեծանում է զուգորդումների թիվը, այդքան ավելի ամբողջական է դառնում նշանակությունը: Հետևաբար, նշանակության/իմաստի յուրացման աստիճանը կախված է նաև զուգորդումների թվից: Այսպիսով, զուգորդական կառույցների դերն ու գործառույթը նոր հետազոտական հնարավորություններ է ընձեռում լեզվի յուրացման ուսումնասիրության ոլորտում:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Pristley J. Hartley's theory of the human mind: on the principle of the association of ideas. London: Printed for J. Johnson, 1775.
2. Выготский Л. С. Собрание сочинений. Москва: Педагогика, 1981-1988.
3. Васильев Л. М. Современная лингвистическая семантика. Москва: Гуманитарные науки, 1990.
4. Гальперин П. Я. Введение в психологию. Москва, 1976.
5. Куликов Л. Психология сознания. СПб.: Питер, 2001.
6. Леонтьев А. А. Деятельность, сознание, личность: учебное пособие. Политиздат, 1975.
7. Леонтьев А. А. Деятельность и сознание. Москва: Политиздат, 1965.
8. Сеченов И. М. Рефлексы головного мозга // *Элементы мысли*. СПб.: Питер, 2001.
9. Тарасов Е. Ф. Методологические проблемы исследования речевого мышления. Москва: Наука, 1985.
10. Кодухов В. Общее языкознание. Москва: Наука, 1976.

**Р. АРАКЕЛЯН** – *Психолингвистические аспекты лингвистического сознания.* – Данная статья посвящена изучению психолингвистических аспектов языкового сознания. Языковое сознание, как и другие его виды, функционирует в индивидуальном сознании как средство вербального выражения носителей языка. Самой важной функцией языкового сознания является познание и выражение объективной реальности. Употребление и оценка понятий и категорий, а также национально-культурные особенности значения слов

проявляются в ассоциативных связях, существующих в сфере сознания. Вышесказанное позволяет сделать вывод о том, что изучение языкового сознания необходимо начать с исследования внутренней структуры сознания.

**Ключевые слова:** языковое сознание, коммуникация, речевая деятельность, категориальные структуры, мышление, ассоциативные связи, значение

**R. ARAKELYAN – *The Psycholinguistic Aspects of Linguistic Consciousness.***

– The paper deals with the study of psycholinguistic aspects of linguistic consciousness, which is a means of speakers' verbal expression. The most significant function of linguistic consciousness is the cognition and reflection of objective reality. The estimation of concepts and the use of categorial constructions are vividly expressed in associative links. This is the reason why we need to study the structure of consciousness before expanding on the nature of linguistic consciousness.

**Key words:** linguistic consciousness, communication, speech activity, categorial structures, mentality, associative links, meaning

**Received: 28.03.2022**

**Revised: 18.04.2022**

**Accepted: 17.06.2022**